Digitally signed by
VRTANESYAN ARAM 2002800081
Date: 28.06.2024 15:00:02

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2024 թ. որոշմամբ
««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ Կ. ՈՒԼՆԵՅԻ 68
1.3 Պետական գրանցման համարը		222.160.47002
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2011-09-26
1.5 ՀՎՀՀ-ն		02602449
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11501806
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://nork.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		norq.@norq.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Անահիտ Պարզյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	70	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր	311,219,500
	Ջերմային էներգիայի ծախսի փոխհատուցում	2,104,688

	ԵԱՏՄ աշխատանքի փնտրման հարթակ	30,881,990
	Վարչապետի աշխատակազմի քաղծառայողների վերապատրաստում	2,591,901
	Երևանի թիվ 1 տուն-ինտերնետ	79,000
	Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն	1,739,631
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ Ասիական զարգացման բանկ	38,690,049
	Անապահովության գնահատման համակարգի լավացում,ՄԱԿ-ի կողմից	17,193,506
	Օգտվողների կառավարման համակարգի նախ.մծակում - Գերմանիա	17,574,000
	Տեղեկատվության տրամադրում	151,592,700
	Ի-Դիսքբիլիթի հարթակի մոդուլավորում,լավացում 2-րդ փուլ	31,112,800
	Արտակարգ իրավիճ.հարթակի ինտեգրման մոդուլի մշակում,	30,565,000
	ԵԱՏՄ Աշխատանքի փնտրման հարթակ	87,243,600
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկում (կատարելագործում,	192,062,300	
Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի շահագործում	66,126,400	
Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի տեղեկատվության տրամադրում	53,030,800	
Ջերմային էներգիայի ծախսի փոխհատուցում	2,104,688	

Աշխատանքի Էլեկտրոնային բորսա	118,125,590
Ի-Դիսրբիլիթի	31,112,800
Տեղեկատվության տրամադրում	151,592,700
Անձի ֆունկցիոնալության գնահատման հարթակ	38,690,049
Տեղեկատվության վերլուծություն հավաքագրում	2,591,901
Արտակարգ իրավիճ մոդուլի մշակում	30,565,000
Օգտվողների կառավարման համակարգի նախ.մծակում - Գերմանիա	17,574,000
Անապահովության գնահատման համակարգի լավացում,ՄԱԿ-ի կողմից	17,193,506
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	722,588,365
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	720,769,734

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի, 2024 թվականի N 95

««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիմնադրամի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով հիմնադրամի կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետով.

Ի գիտություն ընդունել Աուդիտի դրական եզրակացությունը և հաստատել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն Հավելված 1-ի:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 65

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

1. Ամսաթիվը և վայրը՝ 2024թ. հունիս 27, ք. Երևան

Նիստը անցկացվել է հարցման կարգով

2. Խորհրդի նիստին մասնակցել են խորհրդի անդամներից վեցը՝

Նարեկ Մկրտչյան	Հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Դավիթ Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ստեփան Ծատուրյան	«Հյումանայզ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն

Ինչպես նաև հրավիրված անձինք՝

Անահիտ Պարզյան	«Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն
Արմինե Օհանյան	Նիստի քարտուղար

3. Օրակարգ՝

3.1 Հոգաբարձուների խորհրդի 2024թ. հունիսի 27-ի նիստի օրակարգի հաստատում:

3.2 ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը հաստատելու և Աուդիտի դրական եզրակացությունը ի գիտություն ընդունելու հարցը:

4. Նիստի ընթացքը

4.1 Առցանց քննարկման դրվեց օրակարգի *առաջին հարցը:*
Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ այլ առաջարկություններ և առարկություններ չներկայացվեցին:

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22 պրիմ 1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՎԵՑ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇԵՑԻՆ՝
1. Հաստատել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2024թ. հունիսի 27-ի նիստի օրակարգը:

4.2 Առցանց քննարկման դրվեց օրակարգի *երկրորդ* հարցը:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներով և հիմք ընդունելով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՎԵՑ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը և ի գիտություն ընդունել Աուդիտի դրական եզրակացությունը:

Խորհրդի Նախագահ — Նարեկ Մկրտչյան

Խորհրդի անդամներ՝ — Աննա Ժամակոչյան

Տաթևիկ Ստեփանյան

Դավիթ Խաչատրյան

Ներսես Երիցյան

Ստեփան Ծատուրյան

Արձանագրությունը բաղկացած է 3 (երեք) թերթից, կազմվել է 27 հունիսի, 2024թ.:

Նիստի քարտուղար՝ — Ա.Օհանյան

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմ	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ "Four A Consulting" CJSC
audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47
www. 4aconsulting.am
info@4aconsulting.am
CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՍՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՍՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2023թ. ապրիլի 13-ին եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՍՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու

կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

13 հունիսի 2024թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/աուդիտի ղեկավար

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Հոգաբարձուների խորհրդի անդամներն են՝

Անդամներ	Պաշտոն
Նարեկ Մկրտչյան	Խորհրդի նախագահ/ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Դավիթ Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Էդուարդ Պետրոսյան	Միասնական սոցիալական ծառայության պետ
Գևորգ Մանթաշյան	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության նախարարի առաջին տեղակալ
Ստեփան Ծատուրյան	«Հյումանայզ Սերվիսիս» ՍՊԸ գլխավոր տնօրեն
Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի գործադիր տնօրեն

Հոգաբարձուների խորհրդի կազմը ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	139,777	37,477
Ոչ նյութական ակտիվներ	5	330	330
Հետաձգված հարկային ակտիվներ	6	14,967	14,043
		155,074	51,850
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	16,084	16,855
Դեբիտորական պարտքեր	8	22,292	21,077
Դրամական միջոցներ	9	72,566	98,997
		110,942	136,929
Ընդամենը ակտիվներ		266,016	188,779
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	106,816	-
		106,816	-
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	-	-
Կրեդիտորական պարտքեր	11	104,810	87,559
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն			-
		104,810	87,559
Զուտ ակտիվներ	12	211,626	101,220
		54,390	101,220
Ընդամենը պարտավորություններ		266,016	188,779

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 13-ին՝

Գործադիր տնօրեն Գլխավոր հաշվապահ

Անահիտ Ղարզյան Խոսրովանուշ Հակոբյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	13	520,183	501,376
Շնորհից եկամուտ	14	3,140	3,197
Այլ եկամուտ	15	54,136	40,862
Մատուցված ծառայությունների ինքնարժեք		(459,405)	(377,639)
Աշխատակիցներին հատուցումներ		(122,188)	(133,923)
Մաշվածություն		(1,526)	(2,524)
Այլ ծախսեր	16	(43,042)	(19,838)
Ֆինանսական եկամուտ	17	600	677
Այլ ֆինանսական հոդվածներ	18	348	(205)
Գործառնական գործունեությունից արդյունք		(47,754)	11,983
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	19	924	398
Տարվա արդյունք		(46,830)	12,381
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(46,830)	12,381

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(46,830)	12,381
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	11,040	9,263
Հիմնական միջոցների լուծարումից ծախս	83	-
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	(924)	(398)
Տոկոսային եկամուտ	(600)	(677)
Շնորհից եկամուտ	(3,140)	(3,197)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ /վնաս	(348)	205
Գործառնական շահույթ/վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(40,719)	17,577
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(1,215)	(2,435)
Պաշարների փոփոխություն	771	(4,253)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	17,251	41,416
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(23,912)	52,305
Վճարված տոկոսներ	-	-
Վճարված շահութահարկ	-	6,308
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(23,912)	58,613
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և *ոչ նյութական ակտիվների* ձեռքբերում	(113,423)	(5,807)
Ստացված տոկոս	600	677
Շնորհի ստացում	109,956	2,845
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(2,867)	(2,285)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(26,779)	56,328
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	348	(205)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	98,997	42,874
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	72,566	98,997

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Նորք" սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է 2011թ. հուլիսի 28-ի ՀՀ Կառավարության թիվ 1059-Ն որոշմամբ և գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2011թ. սեպտեմբերի 26-ին: Այնուհետև կատարվել են Հիմնադրամի անվան, կանոնադրության, գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություններ: Վերջին փոփոխությունը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կատարվել է 2023թ. ապրիլի 27-ին: Հիմնադրամի կանոնադրությունը խմբագրվել է 2020թ-ի դեկտեմբերի 28-ին:

Հիմնադրամի հիմնադիրի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունն, ի դեմս ՀՀ կառավարության:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68:

Հիմնադրամի նպատակներն են՝

- Սոցիալական ապահովության բնագավառի տեղեկատվական ենթակառուցվածքի բնականոն գործունեությունը և շարունակական արդիականացումն ու կատարելագործումը, այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը.

- Սոցիալական ապահովության բնագավառում էլեկտրոնային սոցիալական ծառայությունների ներդրումը և այդ ծառայությունների շրջանակի ընդլայնումը (այդ թվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ), այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը.

- Սոցիալական ապահովության բնագավառի և կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային իրազեկվածության և հանրային կրթության մակարդակի բարձրացումը, այս նպատակով մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցությունն ապահովելը.

- Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների արտահանումը.

- Սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին աջակցելը.

- Սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների միջազգային փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը կազմել է 73, իսկ (2022թ.՝ 78) մարդ:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար:

Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *"Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի"*:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Հիմնադրամն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- չեն ճանաչել հոդվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄՍ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄՍ-ով,

ՖՀՄՍ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին:

2.5 ՖՀՄՍ-ի պահանջները, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անվանումը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի

ՖՀՄՍ 17	Ապահովագրության պայմանագրեր	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 4	ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 17	ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում - համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 12	Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 8	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներե	1 հունվարի 2023թ.

Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում – Փուլ 2. Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՀՀՄՍ 16 ստանդարտներում

2020 թվականի օգոստոսի 27-ին ՀՀՄՍԽ-ն թողարկել է Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխում – Փուլ 2. Փոփոխություններ ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՀՀՄՍ 16 ստանդարտներում՝ պարզաբանելու հաշվապահական հաշվառման այն խնդիրները, որոնք առաջանում են IBOR-ը (միջբանկային մեկօրյա տոկոսադրույքը) RFR-ով (ոչ ռիսկային տոկոսադրույքով) փոխարինելիս: Տոկոսադրույքի ուղենիշի բարեփոխման 2-րդ փուլը ներառում է մի շարք մեղմացումներ և լրացուցիչ բացահայտումներ: Մեղմացումները կիրառելի են այն ժամանակ, երբ ֆինանսական գործիքը անցում է կատարում IBOR-ից (միջբանկային մեկօրյա տոկոսադրույքից) RFR-ի (ոչ ռիսկային տոկոսադրույքի): Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվար 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Վերոնշյալ փոփոխությունները սույն ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չունեն:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:
Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.50	5.59
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները՝ սարքավորումները, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ, սարքավորումներ	2-10 տարի,
Տրանսպորտային միջոցներ	5-10 տարի,
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	2-10 տարի,
Համակարգչային տեխնիկա	1-8 տարի,
Այլ ՀՄ	2-10 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

<u>Հիմնադրամը որպես վարձակալ</u>

Հիմնադրամը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Հիմնադրամը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ <u>Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով</u>, որպեսզի վճարի վարձավճարները և

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉՇՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Հիմնադրամի կողմից, թողարկված ֆինանսակամ երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Հիմնադրամի միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Հիմնադրամը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Հիմնադրամը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել:

Եթ Հիմնադրամը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Հիմնադրամը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես "Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող" (ԻԱՉՇՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Հիմնադրամը ընտրել է ԻԱՉՇՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Հիմնադրամը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Հիմնադրամը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Հիմնադրամը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Հիմնադրամը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով:

"Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների" (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Հիմնադրամը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Հիմնադրամի պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Հիմնադրամը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Հիմնադրամը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

3.7 Ստացված շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Հիմնադրամը ստանում է ակտիվներին վերաբերող և եկամուտներին վերաբերող շնորհներ:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.8 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք:

Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը

գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Հիմնադրամը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10 Զուտ ակտիվներ

Հիմնադրամը չունի թողարկվող կապիտալի գործիքներ, և համաձայն Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի՝ հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

3.11 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հիմնադրամն առաջին անգամ ՖՀՄՍ 15. *"Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ"* ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Հիմնադրամի կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հիմնադրամի կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. *"Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ"* ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտ փոխարինում է ՀՀՄՍ 18. *"Հասույթ"*, ՀՀՄՍ 11. *"Կառուցման պայմանագրեր"* ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. *"Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ"* ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, "Ժամանակի կոնկրետ պահին", թե "Ժամանակի ընթացքում", պահանջում է դատողություններ:

Հիմնադրամն ընդունել է ՖՀՄՍ 15. *"Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ"* ստանդարտը՝ օգտագործելով կոմուլյատիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից):
Հիմնադրամն ունի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 06.02.2024թ. կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ N ԴՏՊ-1117-11004/24 պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ իրականացվում է սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման, շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ, համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք,այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	85,476	27,359	24,335	137,170
Ավելացում, կապիտալացում	3,896	-	1,551	5,447
Դուրս գրում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	89,372	27,359	25,886	142,617
Ավելացում, կապիտալացում	112,596	-	827	113,423
Ներքին շարժ	78	-	(78)	-
Դուրս գրում	(234)	(1,700)	(1,045)	(2,979)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	201,812	25,659	25,590	253,061
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	66,541	17,539	12,274	96,354
Տարվա ծախս	3,937	2,172	2,677	8,786
Դուրս գրում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,478	19,711	14,951	105,140
Տարվա ծախս	6,923	1,705	2,412	11,040
Դուրս գրում	(229)	(1,700)	(967)	(2,896)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	77,172	19,716	16,396	113,284
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,894	7,648	10,935	37,477
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,640	5,943	9,194	139,777

2023թ. Ընկերությունում հիմնական միջոցների ավելացումը կազմել է 113,423 հազ. դրամ, որոնցից էականներն են.

Անվանում	Քանակ/հատ/	Արժեք
Էլեկտրոնային բորսայի սերվերային համակարգ	1	109,956
Դարպասներ	1	950
Ընդամենը		**110,906**

5. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ	Ֆիրմային անուններ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և այլն	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	19	2,121	10	2,150
Ավելացում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	2,121	10	2,150
Ավելացում	-	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	2,121	10	2,150
Կուտակված մաշվածություն				

2022թ. հունվարի 1-ի դրությամբ	19	1,314	10	1,343
Տարվա ծախս	-	477	-	477
Օտարում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	1,791	10	1,820
Տարվա ծախս				
Օտարում				
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	19	1,791	10	1,820
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	330	-	330
2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	330	-	330

6. Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	14,043	13,645
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում Ճանաչված փոխհատուցում/ծախս	924	398
Տարեվերջի մնացորդ	14,967	14,043

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2022թ. Հունվարի 1	Ճանաչված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	2022թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	3,509	1,821	5,330
Դեբիտորական պարտքերի պահուստ	1,058	142	1,200
Հարկային վնաս	9,078	(1,565)	7,513
Զուտ արդյունք հետաձգված հարկային ակտիվներ	13,645	398	14,043
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-
Զուտ արդյունք	13,645	398	14,043

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2023թ. Հունվարի 1	Ճանաչված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	2023թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Արձակուրդի պահուստ	5,330	(465)	4,865
Դեբիտորական պարտքերի պահուստ	1,200	(1,157)	43
Հարկային վնաս	7,513	2,546	10,059
Զուտ արդյունք հետաձգված հարկային ակտիվներ	14,043	924	14,967
Հետաձգված հարկային պարտավորություն	-		
Զուտ արդյունք	14,043	924	14,967

7. Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	15,773	16,430
Վառելիք	284	401
Այլ նյութեր	27	24
	16,084	16,855

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	17,157	22,039
Տրված կանխավճարներ		-
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(240)	(6,668)
Այլ		1,498
	16,917	16,869
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	5,375	4,208
	22,292	21,077

9. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	-
Բանկային հաշիվներ /դրամային/	72,566	98,997
Բանկային հաշիվներ /արտարժութային/	-	-
	72,566	98,997

10. Ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	-	352
Ստացված ՀՄ-ի մասով (զուտ)	109,956	(352)
Ստացված դրամական միջոցի մասով (զուտ)	(3,140)	-
Տարեվերջի մնացորդ	106,816	-

11. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	13,577	1,486
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	26,155	41,062
Ստացված կանխավճարներ	18,919	-
Աշխատավարձի գծով պարտք	19,129	15,394
Արձակուրդի պահուստ	27,030	29,614
Այլ	-	3
	104,810	87,559

12. Զուտ ակտիվներ

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	88,839	88,839
Տարվա արդյունք	12,381	12,381
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,220	101,220
Տարվա արդյունք	(46,830)	(46,830)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,390	54,390

13. Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների մատուցումից հասույթ	395,473	384,375
Ֆինանսական կազմակերպություններին ծառայությունների մատուցումից հասույթ	122,961	114,348
Այլ	1,749	2,653
	520,183	501,376

14. Եկամուտ շնորհներից

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներից	3,140	352
Եկամուտներին վերաբերող շնորհներից		2,845
	3,140	3,197

15. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլ.Բորսայի անխափան աշխատանքի կազմակերպում	50,435	20,355
ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	2,413	9,644
SS պահանջների վերլուծության ծառայություն	1,288	2,572
Այլ	-	8,291
	54,136	40,862

16. Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գրասենյակային ծախս	2,052	1,027
Փոստի և հեռահաղորդակցության	2,442	2,086
Բանկային և ապահովագրության	41	50
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	13,477	1,546
Վերանորգման ծախս	9,534	453
Արձակուրդի պահուստի ծախս		10,118
ՀՄ օտարման ծախս	83	-
Չփոխհատուցվող հարկերից ծախս	1,145	289
Այլ ծախսեր	14,268	4,269
	43,042	19,838

17. Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տոկոսների եկամուտ	600	677
Ֆինանսական եկամուտ, զուտ	600	677

18. Այլ ֆինանսական եկամուտ/ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	348	(205)
	348	(205)

19. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	924	398
	924	398

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	(47,754)		11,983	
Շահութահարկ 18% (2022թ. 18 տոկոս)	(8,596)	(18.00)	2,157	18.00
Չնվազեցվող ծախսեր	7,672	16.06	(2,555)	(21.32)
Շահութահարկի գծով ծախս	(924)	(1.94)	(398)	(3.32)

20. Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	16,917	15,371
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	72,566	98,997
	89,483	114,368

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	59,736	46,494
	59,736	46,494

21. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

21.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն կարող է առաջանալ Հիմնադրամի ստացված շնորհներից, դեբիտորական և կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

22. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

23. Պայմանական պարտավորություններ

23.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ:

23.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ապահովագրական պայմանագրեր:

23.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Գործարքներ կապակցված կողմերի միջև

24.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հիմնադրամի գործադիր տնօրենն է Անահիտ Պարզյանը:

24.2Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Հիմնադրամի գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Հիմնադրամի կառավարչական անձնակազմը- գործադիր տնօրենն է:

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	30,529	22,905

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2024 12:45